# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 605-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի «Քաղաքացիական և ծառայողական զենքի ու դրա փամփուշտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 605-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները.

1) 20-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 20.1-րդ կետով՝ «20.1 Սպորտային աղեղների անվտանգության պահանջները, ինչպես նաև մակնշմանը, փաթեթավորմանը ներկայացվող պահանջները պետք է համապատասխանեն ԳՕՍՏ Ռ 52115 ստանդարտով սահմանված պահանջներին».

2) IX գլխի տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկը լրացնել հետևյալ տողերով.

«

| | |
|---|---|
| ԳՕՍՏ Ռ 52115 | Հրաձիգային նետողական զենքեր. Աղեղներ ունիվերսալ սպորտա որսորդական, աղեղներ սպորտային, աղեղներ հանգստի և ժամա համար և դրանց նետերը. Ընդհանուր տեխնիկական պահանջնե Անվտանգության փորձարկման մեթոդներ |
| ԳՕՍՏ Ռ 51549 | Նետողական զենք. Արբալետներ և աղեղներ սպորտային. Արբալե աղեղներ հանգստի և ժամանցի համար. Տերմիններ և սահմանու |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ